

Արձանագրություն N9

Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի 13.04.2018թ. նիստի

Օրակարգ.

1. Դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության հետ կապված աշխատանքների կատարման ընթացքը:
2. Ուսանողների արտադրական պրակտիկայի արդյունքների ամփոփում:
3. 2017-2018 ուս. տարում կատարած աշխատանքների վերաբերյալ ամբիոնների վարիչների հաշվետվություն /Ե. Երզնկյան/:
4. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 32 անդամներից 21-ը:

1. ԼՍԵՑԻՆ՝ Ամբիոնների վարիչները զեկուցեցին, որ դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության հետ կապված աշխատանքներն ընթանում են նորմալ:
- ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ելույթ ունեցողները նշեցին, որ խնդրահարույց է արտաքին գրախոսության հետ կապված հարցը. դիպլոմայինների և թեզերի գրախոսման համար մասնավոր կապերով այնքան էլ հեշտ չէ խնդիրը լուծել: Պաշտոնական հիմքեր լինելու դեպքում հնարավոր կլինի դիմել հանրապետության այլ բուհերին: Դեկան Ս. Աբրահամյանը նշեց, որ այդ հարցի լուծումը պետք է գտնել այլ բուհերի կոլեգաներին դիմելով և հորդորելով, որ նույնատիպ խնդիրների համար իրենք էլ կարող են դիմել մեզ: Կարող են ներգրավվել նաև համատեղությամբ աշխատող մասնագետները: Դեկանը նաև խնդրեց հստակորեն սահմանել դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի ծավալը՝ սահմանելով մինիմալ և մաքսիմալ սահման:
- ՈՐՈՇԵՑԻՆ՝ Դիպլոմային աշխատանքների համար սահմանել 30-40 էջ ծավալ, իսկ մագիստրոսական թեզերի համար՝ 40-60:
2. ԼՍԵՑԻՆ՝ Ամբիոնների վարիչները զեկուցեցին, որ ընդհանուր առմամբ պրակտիկաները ընթացել են հաջող ձևով, համապատասխան հաստատություններից ստացված արձագանքները դրական են:
- ՈՐՈՇԵՑԻՆ՝ Պրակտիկայի արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:

3. ԼՍԵՑԻՆ՝

Անգլերենի թիվ երկու ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Ե. Երզնկյանն զեկուցեց, որ, հաջորդ տարվանից սկսած այլ ֆակուլտետներում անգլերենի ուսուցման ժամանակահատվածը սահմանվել է մեկ տարի՝ առաջին կուրսի երկու կիսամյակները: Քանի որ նախկինում այդպես չի եղել՝ առաջացել է ուսումնական ծրագրերը նշված ժամանակահատվածին հարմարեցնելու հարցը, ուստի այս տարում ամբիոնը հիմնականում աշխատել է կատարել և հաստատման ներկայացնել նոր ծրագիր՝ համապատասխան փոփոխություններով: Ծրագրերն արդեն վերջնականացված են և գտնվում են հաստատման փուլում: Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը մասնակցել է տեղական և միջազգային գիտաժողովների, ուսանողների համար կազմակերպել է տարբեր միջոցառումներ: Շարունակվում է հրատարակվել *Օտար լեզուները բարձրագույն դպրոցում* հանդեսը: Հանդեսի այս տարվա առաջին համարը լույս է տեսել, հունիսին կհրատարակվի երկրորդը: Ուսումնական տարին դեռևս չի ավարտվել, և ամբիոնը հույս ունի ավելի լայնացնել կատարվող աշխատանքների ծավալը մինչև այս ուսումնական տարվա ավարտը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Անգլերենի թիվ 2 ամբիոնի հաշվետու ժամանականշրջանում կատարած աշխատանքները գնահատել լավ:

ԸՆԹԱՑԻՎ ԶԱՐՑԵՐ

Որոշեցին՝

- Երաշխավորել Անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ Նարե Հակոբյանի *Խոսքարկման և տեղեկատվական գործառույթների հարաբերակցությունը ակադեմիական դիսկուրսում* թեման՝ ՀՀ ԿԳՆ ԳՊԿ Ասպիրանտների հետազոտությունների աջակցության ծրագիր մրցույթին ներկայացնելու համար:
- Հրատարակության երաշխավորել Անգլերենի թիվ 1 ամբիոնի դասախոսներ Ս. Միրիմանյանի, Ն. Հայրապետյանի, Ն. Գրիգորյանի *Step up to Social Work* ուսումնասօժանդակ ձեռնարկը:
- Հրատարակության երաշխավորել Անգլիական բանասիրության ամբիոնի դասախոսներ Օ. Պողոսյանի և Վ. Ղումաշյանի *Methodological Insights* ուսումնական ձեռնարկը:
- Հրատարակության երաշխավորել Անգլիական բանասիրության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Գ. Մադոյանի *Արտալեզվական գործոնի դերը գեղարվեստական ստեղծագործության մեկնաբանության մեջ* ուսումնական ձեռնարկը:
- Հրատարակության երաշխավորել Անգլիական բանասիրության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Ա. Մանուկյանի *Ժամանակակից անգլերենի բնական-ձևաբանական կադապարները* մենագրությունը:
- Հրատարակության երաշխավորել Անգլիական բանասիրության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Ն. Գասպարյանի և Գ. Մանուկյանի *Brush Up Your Talk* ուսումնական ձեռնարկը:
- Հրատարակության երաշխավորել Գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Յու. Գաբրիելյանի *Լեզվական հաղորդակցության տեսություն* ուսումնական ձեռնարկը:

- Հաստատել Արտասահմանյան գրականության ամբիոնի հեռակա ասպիրանտ Լուսինե Ադամյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ *Մմերիկյան վիպական ավանդույթը և Ֆիլիպ Ռոթի վեպերը* և գիտական ղեկավար նշանակել բ.գ.թ., դոց. Ա. Սեդրակյանին:
- Հաստատել Արտասահմանյան գրականության ամբիոնի հեռակա ասպիրանտ Մելինե Սահակյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ *Դինամիկ քառսի պոետիկան լատինաամերիկյան դիցարանական համակարգում* և գիտական ղեկավար նշանակել բ.գ.թ., դոց. Ն. Գոնչար-Խանջյանին:
- Հաստատել Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի դասախոս Ջեմմա Միլիտոնյանի թեկնածուական ատենախոսության թեման և գիտական ղեկավար նշանակել բ.գ.դ., պրոֆ. Ա. Չուբարյանին:
- Հաստատել Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի դասախոս Աստղիկ Միմոնյանի թեկնածուական ատենախոսության թեման և գիտական ղեկավար նշանակել բ.գ.դ., պրոֆ. Ա. Չուբարյանին:
- Երաշխավորել Անգլիական բանասիրության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Ե. Վարդանյանի թեկնածությունը դոցենտի գիտական կոչման ներկայացնելու համար:

Գիտխորհրդի նախագահ՝

Ս. Աբրահամյան

Գիտխորհրդի քարտուղար՝

Գ. Մուրադյան

13 ապրիլի, 2018 թ.